ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 430-Ա «31» 10 2023թ.

ք.Երևան

ՍԵՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-26.2-Մ2-6) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-3-26.2-Մ2-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ացկացվող ներքին մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի եզրակացությունը՝ Մրցույթի հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ***Սերինե Գորիկի Հովակիմյանին*** 2023 թվականի նոյեմբերի 1-ից նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-3-26.2-Մ2-6) քաղաքացիական ծառայության պաշտոնում՝ ինը ամիս փորձաշրջանով:

2. Ամսական աշխատավարձը սահմանել
ՀՀ դրամ:

3. Սերինե Հովակիմյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22-3-26.2-Մ2-5) Սիրվարդ Ներսիսյանին:

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ